ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 366-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2021.03.08-2021.03.21 Պաշտոնական հրապարակման օրը 19.03.2021	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	18.03.2021
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	18.03.2021
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	20.03.2021	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1444-Ն ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 184-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2021 թվականի N 366-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1444-Ն ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 184-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների բնակավայրերին սոցիալական աջակցության տրամադրման նպատակով փոխհատուցման կարգը, ժամկետները, չափորոշիչները և աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի N 271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1444-Ն որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 12-ի N 184-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Գեղամասար համայնքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Տեղ, Տաթև, Մեղրի սահմանամերձ համայնքների բնակավայրերի ընտանիքների՝

ա. բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման մասով՝ 2021 թվականի փետրվարի 1-ից հետո սպառած բնական գազի և էլեկտրաէներգիայի, օգտագործած ոռոգման ջրի ծավալների սակագնի փոխհատուցմանն առնչվող հարաբերությունների վրա,

բ. սույն կետի 1-ին ենթակետում չնշված սահմանամերձ համայնքների բնակավայրերի ընտանիքների՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը և դրանից հետո սպառած բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման վրա.

2) սահմանամերձ համայնքների բնակավայրերի ընտանիքների՝ հողատարածքների և (կամ) դրանց բարելավումների

անշարժ գույքի հարկի փոխհատուցման մասով՝ 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

Երևան

18.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
մարտի 18-ի N 366-Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

Մարզը	Համայնքը	Բնակավայրը
ՀՀ Արարատի մարզ	Երասխ	գ. Երասխ
	Պարույր Սևակ	գ. Պարույր Սևակ
		գ. Տիգրանաշեն
ՀՀ Գեղարքունիքի մարզ	Ճամբարակ	ք. Ճամբարակ
		գ. Վահան
	Վարդենիս	գ. Ներքին Շորժա
		գ. Վերին Շորժա
	Գեղամասար	գ. Սոթք
		գ. Ազատ
		գ. Կութ
		գ. Նորաբակ
ՀՀ Վայոց ձորի մարզ	Արենի	գ. Արենի
		գ. Խաչիկ
	Զառիթափ	գ. Խնձորուտ
		գ. Սերս
		գ. Նոր Ազնաբերդ
		գ. Բարձրունի
ՀՀ Տավուշի մարզ	Նոյեմբերյան	ք. Նոյեմբերյան
		գ. Բաղանիս
		գ. Բարեկամավան
		գ. Բերդավան
		գ. Դովեղ
		գ. Կոթի
		գ. Ոսկեպար
		գ. Ոսկեվան

	Բերդ	գ. Այգեձոր
		գ. Այգեպար
		գ. Արծվաբերդ
		գ. Մովսես
		գ. Ներքին կարմիր աղբյուր
		գ. Չինարի
		գ. Չորաթան
		գ. Պառավաքար
		գ. Վերին կարմիր աղբյուր
	Ազատամուտ	գ. Ազատամուտ
	Այգեհովիտ	գ. Այգեհովիտ
		գ. Կայան
	Բերքաբեր	գ. Բերքաբեր
	Ծաղկավան (Իջևանի շրջ.)	գ. Ծաղկավան
	Կիրանց	գ. Կիրանց
	Կողբ	գ. Կողբ
	Սարիգյուղ	գ. Սարիգյուղ
	Սևքար	գ. Սևքար
	Վազաշեն	գ. Վազաշեն
ՀՀ Սյունիքի մարզ	Կապան	գ. Ագարակ
		գ. Գեղանուշ
		գ. Գոմարան
		գ. Դավիթ Բեկ
		գ. Դիցմայրի
		գ. Եղվարդ
		գ. Խդրանց
		գ. Կաղնուտ
		գ. Ներքին Հանդ
		գ. Շիկահող
		գ. Սզնակ
		գ. Սյունիք
		գ. Սրաշեն
		գ. Ուժանիս
		գ. Ճակատեն
		գ. Ծավ
		գ. Բարգուշատ
		գ. Խորձոր
	Գորիս	գ. Խնձորեսկ
		գ. Քարահունջ
		գ. Հարթաշեն
		գ. Ձորակ
		գ. Ներքին Խնձորեսկ
		գ. Աղբուլաղ
		գ. Շուռնուխ
		գ. Որոտան
		գ. Վանանդ
		գ. Բարձրավան
	Տեղ	գ. Տեղ
		գ. Արավուս
		գ. Խնածախ
		գ. Խոզնավար
		գ. Կոռնիձոր

		գ. Վաղատուր
		գ. Քարաշեն
	Տաթև	գ. Խոտ
	Մեղրի	գ. Նռնաձոր
Ընդամենը	23 համայնք	81 բնակավայր»:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Թորոսյան

18.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 19 մարտի 2021 թվական: